ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՉՀ-ԳՀԾՁԲ-2022/2»

ք. Երևան «15» 12 2021թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար **Հ. Կ. Շահգալդյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԻՆՏԵԿ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Ս. Հովհաննիսյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում, Կատարողը հանձնման-

ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **տասն** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **1.593.600 (մեկ միլիոն հինգ հարյուր իննսուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ

ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **10 (տասը)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»	«ԿԱՏԱՐՈՂ»
Չարենցավանի համայնքապետարան	**«ԻՆՏԵԿ» ՍՊԸ**
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան	**ք. Չարենցավան 3-րդ թաղամաս**
հրապարակ թիվ 1	**39-րդ շենք թիվ 11 բացվածք**
ՀՀ ՖՆ ԳՎ	**«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ**
Հ/Հ 900132111023	**Հ/Հ 220433330200000**
ՀՎՀՀ 03022497	**ՀՎՀՀ 03020784**
	էլ. հասցեն serge81@mail.ru
	հեռ. 094-80-22-04
Համայնքի ղեկավար՝	**Տնօրեն՝ Ս. Հովհաննիսյան**
Հ. Կ. Շահգալդյան	
(ստորագրությունը)	**(ստորագրությունը)**
Կ.Տ	**Կ.Տ**

Հավելված թիվ 1
«15» 12 2021 թ. կնքված
«ՁՀ-ԳՀԾՁԲ-2022/2» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	50311120/504	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ (Հավելվածի բացվածքը կցվում է)	դրամ	1.593.600	1	ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1	Ծառայության մատուցումն իրականացվելու է 2022 թվականին, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության պահանջները

*Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

**Եթե պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132111023
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Շահգալդյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ԿԱՏԱՐՈՂ»
«ԻՆՏԵԿ» ՍՊԸ
ք. Չարենցավան 3-րդ թաղամաս 39-րդ շենք թիվ 11 բացվածք
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220433330200000
ՀՎՀՀ 03020784
էլ. հասցեն serge81@mail.ru
հեռ. 094-80-22-04

Տնօրեն՝ Ս. Հովհաննիսյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ՝

Հ/հ	Ծառայությունների և աշխատանքների անվանումները	Ծառայության և աշխատանքի միավորի գինը (հաշվարկված է ընդհանուր սարքի և սարքավորման համար), ՀՀ դրամ
1	2	3
1	***Սերվերների, համակարգիչների, մոնիտորների և անխափան սնուցման սարքերի (UPS) սպասարկում***	
1	Պրոֆիլակտիկա (փոշիների մաքրում, աղմուկի վերացում, cooler-ի յուղում)	10,000
2	Մայրական սալիկի (MB) նորոգում	20,000
3	Մայրական սալիկի (MB) փոխարինում նորով ներառյալ 1151 socket MB	60,000
4	Կոշտ սկավառակի (HDD) փոխարինում նորով ներառյալ /HDD 500GB SATA, 7200 RPM/	40,000
5	Կոշտ սկավառակի (HDD) փոխարինում նորով ներառյալ /HDD 1 TB SATA, 7200 RPM/	60,000
6	Կոշտ սկավառակի (SSD) փոխարինում նորով ներառյալ SDD 120 GB SATA,	36,000
7	Կոշտ սկավառակի (SSD) փոխարինում նորով ներառյալ SDD 240 GB SATA	60,000
8	DVD-RW փոխարնում նորով	12,000
9	Օպերացիոն հիշողության (RAM) փոխարինում նորով ներառյալ (DDR2 1024M 667/800MHZ)	16,000
10	Օպերացիոն հիշողության (RAM) փոխարինում նորով ներառյալ (DDR2 2048M 667/800MHZ)	16,000
11	Օպերացիոն հիշողության (RAM) փոխարինում նորով ներառյալ (DDR3 2048M 1333MHZ)	20,000
12	Նոութբուքերի օպերացիոն հիշողության (RAM) փոխարինում նորով ներառյալ (DDR2 2048M 667/800MHZ)	16,000
13	Նոութբուքերի օպերացիոն հիշողության (RAM) փոխարինում նորով ներառյալ (DDR3 2048M 667/800MHZ)	16,000
14	Նոութբուքերի սնուցման բլոկի վերանորոգում	10,000
15	Նոութբուքերի սնուցման բլոկի փոխարինում նորով ներառյալ սնուցման բլոկ	12,000
16	Նոութբուքերի մոնիտորների վերանորոգում	10,000
17	Նոութբուքերի մոնիտորների փոխարինում նորով ներառյալ մոնիտոր	50,000
18	Նոութբուքերի մարտկոցների փոխարինում	40,000
19	Սնուցման բլոկի վերանորոգում	10,000
20	Սնուցման բլոկի փոխարինում նորով ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 450 ՎՏ /Power supply unot for P4Case 450w/	16,000
21	Սնուցման բլոկի փոխարինում նորով ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 550 ՎՏ/Power supply unot for P4Case 550w/	16,000
22	Մոնիտորների դիագնոստիկա	10,000
23	Մոնիտորների վերածրագրավորում	10,000
24	LCD-ի լամպի փոխարինում նորով ներառյալ լամպը 17"	24,000
25	LCD-ի լամպի փոխարինում նորով ներառյալ լամպը 19"	24,000
26	LCD-ի լամպի փոխարինում նորով ներառյալ լամպը 20"	24,000
27	LCD-ի լամպի փոխարինում նորով ներառյալ լամպը 22"	30,000
28	Մոնիտորների վերանորոգում (վնասված մասերի փոխարինում նորով)	30,000
29	Անխափան սնուցում սարքի (UPS) վերածրագրավորում	10,000
30	Անխափան սնուցում սարքի (SMART UPS) վերածրագրավորում	10,000
31	Անխափան սնուցում սարքի (UPS) ղեկավարող սալիկի վերանորոգում	10,000
32	Անխափան սնուցում սարքի (UPS) մարտկոցի փոխարինում նորով 12V, 7,5A	18,000
33	Անխափան սնուցում սարքի (UPS) մարտկոցի փոխարինում նորով 12V, 9A	24,000
34	Անխափան սնուցում սարքի (UPS) մարտկոցի փոխարինում նորով 12V, 18A	30,000
35	Ստեղնաշարի փոխարինում նորով ներառյալ ստեղնաշարը	8,000
36	Մկնիկի փոխարինում նորով (լարի երկարությունը ոչ պակաս քան 160սմ, չափսերը ոչ պակաս քան 11x5սմ) ներառյալ մկնիկը	5,600
37	Մոնիտորների VGA լարի փոխարինում նորով, 1,5մ ներառյալ լարը	3,000
38	Մոնիտորների VGA լարի փոխարինում նորով, 2մ ներառյալ լարը	3,000
39	Համակարգիչների ցանցային սպասարկում	10,000
40	Ցանցի բաժանիչ սվիչների վերանորոգում	10,000
41	Ցանցի բաժանիչ սվիչների փոխարինում նորով ներառյալ սվիչ 8 պորտ	16,000
42	Ցանցի բաժանիչ սվիչների փոխարինում նորով ներառյալ սվիչ 16 պորտ	24,000
43	Ցանցի բաժանիչ սվիչների սնուցման բլոկի վերանորոգում	10,000
44	WIFI rauter-ի վերանորոգում	10,000
45	WIFI rauter-ի փոխարինում նորով ներառյալ WIFI rauter	24,000
46	UTP 5E մալուխ 1մ	300,000
47	Տեսախցիկների վերանորոգում	10,000
48	Տեսախցիկների սնուցման բլոկի վերանորոգում	20,000
49	Տեսախցիկների ցանցի սպասարկում	10,000
50	Տեսագրման սարքի նորոգում	30,000

51	Տեսախցիկների նորոգում, փոխարինում նորով	40,000
2	***Տպիչների, պատճենահանող սարքերի, սվիչների, տեսախցիկների սպասարկում***	
52	Տպիչների դիագնոստիկա	10,000
53	Տպիչների պրոֆիլակտիկա	10,000
54	Տպիչների լիցքավորում 4 գույներով	10,000
55	Տպիչների քատրիջի փոխարինում նորով	30,000
56	Գունավոր լազերային տպիչների լիցքավորում 4 գույներով	30,000
57	Տպիչների վերանորոգում առանց պահեստամասերի	10,000
58	Լիցքավորում լազերային տպիչների ներառյալ տոները 130 գրամ	10,000
59	Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման ներառյալ թմբուկ	10,000
60	Մագնիսական լիսերի փոխարինում նորով առանց լիցքավորման ներառյալ մագնիսական լիսեռը	10,000
61	Մաքրող դանակի փոխարինում նորով ներառյալ մաքրող դանակը	10,000
62	Կարատրոնի փոխարինում նորով առանց լիցքավորման ներառյալ կարատրոնը	10,000
63	Տպիչի ռետինե գլանի փոխարինում նորով ներառյալ ռետինե գլանը	10,000
64	Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով ներառյալ թերմոթաղանթը	20,000
65	Վառարանի ռետինե գլանի փոխարինում նորով ներառյալ ռետինե գլանը	10,000
66	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ թղթի տրման ռետինե լիսեռը	10,000
67	Տպիչի ֆորմատորի փոխարինում նորով ներառյալ ֆորմատորը	10,000
68	Սկաների դիագնոստիկա	10,000
69	Սկաների ռետինե գլանի փոխարինում նորով ներառյալ ռետինե գլանը	10,000
70	Սկաների լամպի փոխարինում նորով ներառյալ լամպը	10,000
71	Քարթրիջի չիպի վերածրագրավորում	10,000
72	Տպիչի վերածրագրավորում	10,000

Ցանկացած մասի, դետալի կամ հանգուցի համար Կատարողը Պատվիրատուին երաշխավորում է վերանորոգման դեպքում՝ առնվազն 9 ամիս, իսկ փոխարինման դեպքում՝ առնվազն 12 ամիս: Ծառայության արժեքի մեջ ներառված են փոխարինվող մասերի, դետալների, հանգույցների գները: Փոխարինվող մասերը և օգտագործվող նյութերը օգտագործված չեն և արտադրողի կողմից արտոնագրված:

Եթե Կատարողի կողմից միջամտության արդյունքում սարքի, սարքավորման հետ առաջանում են խնդիրներ, ամբողջական վերանորոգումը կատարվում է Կատարողի կողմից և իր միջոցներով:

Պատվիրատուի կողմից սարքի, սարքավորման սպասարկման հայտ ներկայացնելու (հայտը կարող է լինել էլեկտրոնային, թղթային և բանավոր) դեպքում Կատարող կազմակերպության կողմից ծառայությունը մատուցվում է՝ լիցքավորումը՝ 2 ժամվա ընթացքում, վերանորոգումը և փոխարինումը՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ պատվիրատուի հետ համաձայնեցված հատուկ դեպքերում սահմանված ժամկետները: Վերոնշյալ համակարգչային պարագաների փոխարինումը նորով իրականացվում է միայն Պատվիրատուի պահանջով:

Սպասարկման ենթակա համակարգչային սարքեր.

- **Սերվեր՝ թվով 1 հատ.**
- **Համակարգիչներ՝ թվով 45 հատ, 2006-2016թթ. արտադրության.**
- **Մոնիտորներ՝ թվով 45 հատ.**
- **Անխափան սնուցման սարքեր (UPS)՝ թվով 10 հատ.**
- **Թանաքային, լազերային տպիչներ և պատճենահանող սարքեր՝ HP 1020-5 հատ, Canon LBP2900-1 հատ, HP 3052-1 հատ, Canon LBP-252DW-1 հատ, Canon IMAGERunner-1 հատ, Canon MF3010-7 հատ:**

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան
հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132111023
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Շահգալդյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ԿԱՏԱՐՈՂ»
«ԻՆՏԵԿ» ՍՊԸ
ք. Չարենցավան 3-րդ թաղամաս
39-րդ շենք թիվ 11 բացվածք
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220433330200000
ՀՎՀՀ 03020784
էլ. հասցեն serge81@mail.ru
հեռ. 094-80-22-04

Տնօրեն՝ Ս. Հովհաննիսյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված թիվ 2
«15» 12 20 21 թ. կնքված
«ՀՀ-ԳՀԾՁԲ-2022/2» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50311120/504	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

**Պայմանագրում գումարները նշվում են տոկոսով, իսկ համաձայնագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ:

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան
հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132111023
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Շահգալդյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ԿԱՏԱՐՈՂ»
«ԻՆՏԵԿ» ՍՊԸ
ք. Չարենցավան 3-րդ թաղամաս
39-րդ շենք թիվ 11 բացվածք
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220433330200000
ՀՎՀՀ 03020784
էլ. հասցեն serge81@mail.ru
հեռ. 094-80-22-04

Տնօրեն՝ Ս. Հովհաննիսյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն